# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Սավա ՍՊԸ-ն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 29 | Ամբար ՍՊԸ | Բլղուր, համաձայն ՀՍՏ 303-2008 ստանդարտացման փաստաթղթի: Փաթեթավորման մակնշումը լինի ընթեռնելի: Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Պահանջվող քանակներն ըստ պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրի Առանց թթվահամության, դառնահամության, բորբոսահոտի, նեխահոտի և կողմնակի համի և հոտի: Դեղին գույնի, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, |

| | | |
|---|---|---|
| | | աղբային խառնուկները` 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից: ` գործարանային փաթեթավորմամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 60%: Ընդունել ի գիտություն, մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական անձնագրեր: Սննդամթերքի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանությունները շտկելու ժամկետ է սահմանվում 1 օրացուցային օր:Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: " Մատակարարման հստակ օրը կսահմանվի նախապես, պատվիրատուի կողմից, ոչ ուշ քան 3 օրացուցային օր առաջ` պահանջագրով, էլեկտրոնային փոստով: Մատակարարումն անհրաժեշտ է իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրով սահմանված օրը (երկուշաբթի կամ երեքշաբթի), ժամը 8:30-ից մինչև 16:30-ը: Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագիրը և բոլոր մթերքների սերտիֆիկատները ներկայացնել առաջին մատակարարման ժամանակ: Սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված լիազորագրով: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

САВА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 29 | | |